# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՃԹԱՆՕ» (ՆԱՃԱՐԾՅԷԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 87 - 88 (16584) ՇԱԲԱԹ, 4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ

## ԿԱՅԱՑԱՎ ՄԱՅՐՈՒՂԱՅԻՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

### ԲԱՔՈՒ-ԹԲԻԼԻՍԻ-ՍՏԱՄԲՈՒԼ-ՓԱՐԻԶ-ԼՈՆԴՈՆ ԵՐԿԱԹԳԾԻ ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԸ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ

*Հոկտեմբերի 30-ին Բաքվում, հանդիսավոր պայմաններում, կայացավ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու պաշտոնական բացման արարողությունը:*



Հանդիսությանը ներկա էին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Ղազախստանի վարչապետ Բակիջան Սագինտաեւը, Ուզբեկստանի վարչապետ Աբդուլլա Արիպովը, պաշտոնական այլ անձինք:

Երկաթուղու հանդիսավոր բացմանը, այլոց թվում ելույթ ունեցավ նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին (*ստորեւ ներկայացված է ելույթը՝ կրճատումներով*):

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, Ղազախստանի վարչապետ Բակիջան Սագինտաեւը, եւ Ուզբեկստանի վարչապետ Աբդուլլա Արիպովը խորհրդանշական կերպով երկաթուղային ուղիների մեջ մեխեր մեխեցին, փոխեցին սլաքները եւ բացեցին հուշատախտակը:

Հինգ երկրների ղեկավարները համատեղ լուսանկարվեցին: Նրանք նաեւ շարժվեցին նոր երկաթգծով անցնող առաջին գնացքով:

Մեր ընթերցողին հիշեցնենք, որ երկաթուղու շինարարության նախագիծը մեկնարկեց 2007թ. փետրվարի 7-ին, միջպետական եռակողմ համաձայնագրի ստորագրմամբ: Ակնկալվում էր, որ այն պետք է շահագործման հանձնվեր 2012թ., սակայն հնարավոր եղավ ավարտել միայն 2017թ.:

Նախագծի շրջանակներում, 105 կմ երկաթուղային նոր ուղի կառուցվեց Ախալքալաքից մինչեւ Կարս, որից 76 կմ բաժին է ընկնում Թուրքիային, իսկ 29 կմ անցնում է Վրաստանի տարածքով, Ախալքալաքից Կարծախ: Վերակառուցման աշխատանքներ տարվեցին նաեւ 160 կմ երկարությամբ Ախալքալաքի-Մարաբդա գործող երկաթուղու վրա: Վրաստանի տարածքում, նախագծի շրջանակներում, կառուցվեց 3 կայարան (2-ը՝ Ախալքալաքիում, 1-ը՝ Կարծախում):

Երկաթուղու ընդհանուր երկարությունը 826 կմ է:

Բաքու-Թբիլիսի-Կարսի շահագործման առաջին փուլում նախատեսվում է տեղափոխել 1 միլիոն ուղեւոր եւ 6,5 միլիոն տոննա բեռ: Երկրորդ փուլում բեռնափոխադրումների ծավալը կարող է հասնել տարեկան 17 միլիոն տոննայի եւ փոխադրել տարեկան 2 միլիոն ուղեւոր:

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՆՈՐ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ԿՆՊԱՍՏԻ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ»



*Հանդես գալով Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու բացմանը՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքով, արարողության ժամանակ տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունն ընդգծում է այս նախագծի հատուկ ռազմավարական նշանակությունը:*

- Մեր երկրների աշխարհաքաղաքական դիրքը բացառիկ հնարավորություն է ընձեռում վերածվել Եվրոպան ու Ասիան կապող կամրջի: Ուստի վստահ եմ, որ նոր երկաթուղին կփոխի գոյություն ունեցող տնտեսական իրականությունը եւ նոր հնարավորություններ կստեղծի ոչ միայն մեր տարածաշրջանում, այլեւ նրա սահմաններից դուրս: Վստահությամբ կարելի է ասել, որ այսօր դրվում է եվ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

*Նոյեմբերի 2-ին Վրաստանի խորհրդարանի բյուրոյին ներկայացվեց օրենսդիր մարմնի 116 պատգամավորների կողմից ստորագրված սահմանադրական փոփոխությունների նախագիծը, որը ներառվելու է ընդամենը երկու շաբաթ առաջ նույն խորհրդարանի կողմից հավանության արժանացած սահմանադրության օրինանախագծում: Դա լուրջ տարակուսանք է առաջացրել մասնագետների շրջանում, քանի որ, նրանց համոզմամբ, երկրի հիմնական օրենքի հաճախակի փոփոխումը չի կարող դրական ազդեցություն ունենալ նրա առաջընթացի վրա:*

Այսօր ներկայացված փոփոխությունները նախատեսում են ընտրական դաշինքների միանշանակ թույլտվություն 2020 թվականի ընտրություններին. «բոնուսային» համակարգի չեղարկում, փոփոխություններ՝ դավանանքի ազատության եւ ընտրություննե-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԷՍՏՈՆԻԱ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Հոկտեմբերի 31-ին, եռօրյա պաշտոնական այցով, Թբիլիսի ժամանեց Էստոնիայի նախագահ Քերստի Կալյուլայդը՝ ամուսնու՝ Գեորգ-Ռենե Մաքսիմովսկու հետ:*



Էստոնիայի նախագահի հետ միասին Վրաստան ժամանեցին երկրի պաշտոնական պատվիրակությունը եւ մի խումբ գործարարներ:

Վրաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցած դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, տեղի ունեցավ Վրաստանի եւ Էստոնիայի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Քերստի Կալյուլայդի առանձնազրույցը, ապա բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով:

Հանդիպման ավարտից հետո, անցկացվեց երկու նախագահների մամլո ասուլիս, որին հետեւեց երկկողմ մի շարք փաստաթղթերի ստորագրման արարողությունը:

Այցի շրջանակներում, Էստոնիայի նախագահն ու նրա գլ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՌՈՒՍԱԿԱՆ ԶԼՄ - ԻՑ

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԲԱՐԵԽՂՃՈՐԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ՀԱՐԵՎԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը բացառիկ հարցազրույց է տվել ռուսական Business FM-ին:*



*Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցից մի հատված, որտեղ Հայաստանի նախագահը անդրադառնում է Վրաստանի հետ հարաբերություններին:*

***- Մենք այսօր Spayka ընկերությունում էինք, որը, հավանաբար, Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի խոշորագույն արտահանողն է: Ես առաջին հերթին հարցրել եմ սիա թե ինչի մասին. մենք բաժանված ենք Վրաստանով, այն Եվրոպական միության հետ ազատ առեւտրի գոտու մի մասն է: Նրանցից իմացա, որ ոչ մի խնդիր չունենք: Իսկապես առեւտրաշրջանառությունն աճում է, եւ նախատեսվում է, որ շատ արագ կաճի: Այնուամենայնիվ, այդ տարածքը հատելու եւ Վրաստանի գործոնն ի սկզբանե նախատեսվե՞լ է: Այն կարո՞ղ է արգելակող լինել Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ առեւտրի զարգացմանը:***

- Եթե մենք Վրաստանի հետ վատ հարաբերություններ ունենայինք, իհարկե, կարող էր: Բայց այդպիսի դեպքեր չեն եղել: Ներկայումս Հայաստանը հնարավորություն չունի առեւտրային հարաբերություններ (ԵՄ երկրների հետ) վարել այլ կերպ, քան Վրաստանով:

Ի սկզբանե, այն մարդիկ, ովքեր զբաղվում էին ե'ւ Մաքսային միության, ե'ւ Եվրասիական տնտեսական

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՆՈՐ ԴԵՍՊԱՆ



Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի՝ հոկտեմբերի 31-ի հրամանագրով, 49-ամյա Ռուբեն Սադոյանը նշանակվել է Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան:

*Հայաստանի նախագահի՝ հոկտեմբերի 31-ի մեկ այլ հրամանագրով, Յուրի Վարդանյանն ազատվել է Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:*

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՆՈՐ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ԿՆՊԱՍՏԻ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րասիական կամրջի հիմքը, ինչը միմյանց կհանգուցի ոչ միայն մեր էկոնոմիկան, այլեւ մեր քաղաքացիներին, կբարելավի եւ կավելացնի նրանց բարեկեցությունը: Երկաթուղային նոր ուղու լիարժեք գործարկումը կնպաստի մեր երկրների տարանցիկ եւ լոգիստական ներուժի առավել իրացմանը եւ է՛լ ավելի կամրապնդի տարածաշրջանի տարանցիկության ու առեւտրական կարգավիճակը: Նրա խոսքով, նոր երկաթուղու գործարկումը կհանգեցնի արդի ենթակառույցների զարգացմանը, կդյուրացվի նոր շուկաների յուրացումը եւ կնպաստի զբոսաշրջության ու վերամշակման ոլորտների զարգացմանը, կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչը մեր տարածաշրջանի տնտեսական կայուն զարգացման եւ առաջընթացի նախադրյալն է:

- Երկաթուղու շինարարության եւ արդիականացման հետ միասին, բնականաբար, մենք զարգացնելու ենք նավահանգստային ենթակառույցը, նաեւ մեծ ներդրումներ ենք կատարում ճանապարհային ենթակառույցներում, ինչը նախատեսում է Վրաստանի հատվածում տարանցիկ միջանցքների քառաշերտ մայրուղու շինարարություն: Մենք ցանկանում ենք, որ Վրաստանը իր բաժինը ներդնի «Մետաքսե մեծ ճանապարհի» վերականգնման եւ «Մի ճանապարհ՝ մի գոտի» նախաձեռնության իրականացման գործում,- իր խոսքում ասաց Վրաստանի վարչապետը:

# ԱԽԱԼՔԱԼԱՔԻՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՆԳՈՒՅՑ՝ ԵՎՐՈՊԱՅԻՑ ԱՍԻԱ ՏԱՐԱՆՑԻԿ ԵՐԿԱԹՈՒՂՈՒՄ



***Օրերս կորեական «Black and Caspian sea» ընկերության ղեկավարները, Ախալքալաքին համարելով Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու բաղկացուցիչ մաս եւ շահավետ տարանցիկ միջանցք, այցելեցին Ախալքալաքի՝ ծանոթանալու երկաթգծի տեղի հատվածին:***

Ընկերությունը՝ որպես գործընկեր, ընտրել է «Caucastransexpress» տրանզիտային ընկերությանը, ում միջոցով իրականացնելու է իր փոխադրումները: «Black and Caspian sea»-ը պատրաստ է հաջորդ տարվա հունվարից Ախալքալաքի միջով անցկացնել իր ապրանքները:

- Կարծում եմ, որ Ախալքալաքի կայարանը ապագայում շատ կարեւոր տեղ է լինելու՝ որպես տարանցիկ միջանցք, ուստի,՝ եկել եմ այստեղ տեսնելու այն: Մենք ցանկանում ենք, որ Կենտրոնական Ասիայից ստացված ապրանքները տեղափոխվեն Թուրքիա եւ Մերձավոր Արեւելքի ու Եվրոպայի երկրներ: Հուսով եմ, որ միջանցքը կայուն կլինի,- ասում է «Black and Caspian sea» ընկերության տնօրեն Լի Դոնգը:

«Caucastransexpress» ընկերության նախագահ Գիորգի Դանելիան գտնում է, որ Ախալքալաքի դերը շատ կարեւոր է Բաքու-Թբիլիսի-Կարս նախագծում:

- Միջանցքը դառնում է շատ գրավիչ, եւ այդ միջանցքում կարեւորագույն այլընտրանքներից նախատեսվում է Ախալքալաքին: Երկաթգծով ապրանքների փոխադրումն ամենաէժաններից է,- ասում է Գիորգի Դանելիան:

«Caucastransexpress» ընկերության շրջանային համակարգող Միխայիլ Կոլիկիդին կարծում է, որ եթե բեռներն անցնեն Ախալքալաքի կայարանով, ապա դա հնարավորություն կտա տարածաշրջանում ստեղծել նոր աշխատատեղեր եւ կզարգանա զբոսաշրջությունը:

- Կբացվեն տերմինալներ, հարկերը կմտնեն տեղական բյուջե: Կզարգանա նաեւ զբոսաշրջությունը: Զբոսաշրջիկները կծանոթանան մեր ամենօրյա կյանքին, կհամտեսեն Ջավախեթիի խոհանոցը եւ կծանոթանան Ջավախեթիի տարբեր ազգությունների ավանդույթներին: Բացի այդ, Հայաստանը նույնպես կարող է իր ապրանքները տանել Ախալքալաքիով,- ասաց Միխայիլ Կոլիկիդին:

*ՇՈՒՇԱՆ ՇԻՐԻՆՅԱՆ*

# 2017 ԹՎԱԿԱՆ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2. ԺԱՄԸ 12:00. ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ԿԱՅԱՐԱՆԸ ՆՈՐ ԵՐԿԱԹՈՒՂՈՎ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՌԱՋԻՆ ԲԵՌՆԱՏԱՐԸ



Նոյեմբերի 2-ին, ժամը 12:00-ին Ախալքալաքի կայարան հասան Ղազախստանից ուղարկված հացահատիկով բեռնավորված բեռնարկղերը:

Ինչպես հաղորդեց Շուշան Շիրինյանը, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթգծի Ախալքալաքի երկաթուղային կայարանն ընդունեց առաջին 15 բեռնատար վագոնները: Վագոնների գծի փոխարինումը սովորականից եվրոպականի քանի որ դեռ չի կատարվել, բեռնարկղերը վերաբեռնվել են ուրիշ վագոններ:

Առաջին բեռնարկղերին սպասում էին նոյեմբերի 1-ին, սակայն, քանի որ կայարանի լուսավորության ցանցը դեռեւս մոնտաժված չէ, փոխադրողները նպատակահարմար գտան բեռնատար գնացքը ցերեկով հասցնել կայարան: Հզոր կռունկների օգնությամբ բեռնարկղերը այլ վագոններ վերաբեռնելուց հետո, գնացքաշարը կշարունակի ճանապարհը դեպի Թուրքիա:

Առաջին բեռն ընդունեցին «Վրացական երկաթուղու» եւ «Ադրբեջանական երկաթուղու» ներկայացուցիչները:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# ՏԱՐԱԴՐԱՄԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ ԲՆՈՐՈՇ Է ԼՈՂԱՑՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՄԱՐ

***Վերջին օրերին միջազգային տարադրամների՝ դոլարի եւ եվրոյի նկատմամբ վրացական տարադրամի՝ լարիի արժեզրկումը լուրջ մտահոգություն է առաջացրել լայն հասարակայնության շրջանում:***



Բառացիորեն մի քանի օրվա ընթացքում, դոլարի համեմատությամբ, լարին նախ հատեց 2,5-ի եւ, ապա՝ 2,6-ի նշագիծը, իսկ ինչ վերաբերում է լարի-եվրո հարաբերակցությանը, ապա դրա նշագիծը հատեց 1:3-ի սահմանը:

Մեկնաբանելով ազգային տարադրամի վերջին օրերի նշանակալի արժեզրկումը՝ Վրաստանի Ազգային բանկի փոխնախագահ Արչիլ Մեստվիրիշվիլին նշեց, որ Վրաստանում գործում է տարադրամի փոխանակման լողացող տոկոսադրույք:

- Իսկ նման տոկոսադրույքի համար տատանումները բնորոշ են: Այն, ինչ մենք այսօր տեսնում ենք, այն է, որ տոկոսադրույքը սահմանող գործոնները դրական են: Դա նշանակում է, որ միջին եւ երկարատեւ ժամկետում տոկոսադրույքին ոչինչ չի սպառնում: Մոտ ժամանակահատվածում, բնականաբար, կլինեն սպասումներ, որոնք երբեմն լինում են հիմնավորված: Եթե տեսնենք, որ դա սպառնում է արժեզրկմամբ, ապա բոլոր միջոցներն ունենք դրա վրա ազդելու համար,- հայտարարեց Ազգային բանկի փոխնախագահը:

Իսկ մինչ այդ, ազգային տարադրամի հերթական արժեզրկման կապակցությամբ, կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը քննադատում է Ազգային բանկին, իսկ ընդդիմությունը արժեզրկումը պայմանավորում է կառավարության սխալ քաղաքականությամբ:

Մասնավորապես, խորհրդարանի ճյուղային էկոնոմիկայի կոմիտեի նախագահ Ռոման Կակուլիան Ազգային բանկին մեղադրում է հասարակության պակաս տեղեկատվության մեջ: Նա վստահություն հայտնեց, որ երկրում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները չեն նվազել, եւ լարիի նշանակալի արժեզրկում չի լինի:

- Մեր երկրի տնտեսական քաղաքականությունը ճիշտ է: Տվյալ պարագայում, խոսքը կոնկրետ իրադարձության մասին է, երբ Ազգային բանկը պետք է առավել բաց լինի իր վերլուծություններում, որպեսզի հասարակայնությանը հստակ պարզաբանի այն միտումները, որոնք կարող են հանգեցնել տոկոսադրույքի փոփոխությանը,- նշեց Ռոման Կակուլիան:

Իր հերթին, ընդդիմությունը շեշտը դնում է կառավարության սխալ քաղաքականության եւ երկրում տարածված կոռուպցիայի վրա:

- Ներդրումների նվազեցումը, կոռուպցիան, ինչը դարձել է երկրի կառավարության առօրյա կենսաձեւը, բնականաբար, արտացոլվում են ինչպես էկոնոմիկայի, այնպես էլ՝ լարիի արժեքի վրա,- հայտարարել է «Ազգային շարժման» ներկայացուցիչ Լեւան Խաբեիշվիլին:



ԱՄՆ

## ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

*Հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում չարագործը բեռնատար-պիկապով մեծ արագությամբ մի քանի թաղամաս է անցել հեծանվորդների համար առանձնացված գոտիով, որը ավտոճանապարհից բաժանված է արգելապատնեշով եւ վրաերթի ենթարկել բոլոր նրանց, ովքեր հանդիպել են իր ճանապարհին: Չարագործը բախվել է դպրոցական ավտոբուսին, ինչից հետո մեքենան կանգ է առել:*

*Երբ տղամարդը զենքը ձեռքին դուրս է եկել վարորդական խցիկից, ոստիկանությունը կրակ է բացել նրա վրա՝ վիրավորելով որովայնի շրջանում: Նրան տեղափոխել են հիվանդանոց: Ահաբեկչության հետեւանքով զոհվել է ութ մարդ, առնվազն 12 հոգի վիրավորվել են:*

*Ահաբեկչությունը կատարել է Ուզբեկստանից սերված 29-ամյա Սայֆուլլո Խաբիբուլլայի Սաիպովը: Նա ԱՄՆ էր ժամանել 2010 թվականին եւ ապրում էր Ֆլորիդայի նահանգի Թամպա քաղաքում:*

ԱՖՂԱՆՍՏԱՆ

## ԱՌՆՎԱԶՆ 13 ԶՈՀ ԵՎ 13 ՎԻՐԱՎՈՐ

*Առնվազն 13 մարդ է զոհվել, եւս 13 հոգի վիրավորվել՝ հոկտեմբերի 31-ին Աֆղանստանի մայրաքաղաք Քաբուլում իրականացված պայթյունի հետեւանքով:*

*Ըստ տեղեկատվության, մահապարտ ահաբեկիչն իրեն պայթեցրել է Քաբուլի Վազիր-Աքբար-Խան դիվանագիտական թաղամասում: Զոհերի եւ տուժածների մեծամասնությունը պետական ծառայողներ են:*

ԻՍՊԱՆԻԱ

## ՀԱՅՑ՝ ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

*Իսպանիայի գլխավոր դատախազ Խոսե Մանուել Մասան հոկտեմբերի 30-ին հայտարարել է Կատալոնիայի այն քաղաքական գործիչների դեմ հայց ներկայացնելու մասին, որոնք առնչություն ունեն տարածաշրջանային խորհրդարանի կողմից անկախության հռչակման հետ:*

*Գլխավոր դատախազը պարզաբանել է, որ խոսքը խռովությանը, պետական միջոցները վատնելուն վերաբերող մեղադրանքների մասին է: Նա նշել է երկու հայցերի մասին:*

*Առաջինը՝ Կատալոնիայի ժեներալիտետի աշխատանքից հեռացված ղեկավարների նկատմամբ է. այն կքննարկվի Ազգային դատական կոլեգիայի կողմից: Եվս մեկ հայց Կատալոնիայի խորհրդարանի՝ անկախության օգտին քվեարկած անդամների դեմ է եւ պետք է քննարկվի Գերագույն դատարանում: Ընդ որում, գլխավոր դատախազությունում խափանման միջոցներ չեն պահանջել այդ գործով ֆիգուրանտների նկատմամբ, ուստի նրանք կկարողանան ազատության մեջ մնալ՝ սպասելով դատական իշխանությունների վճռին:*

## ԱՐՁԱԿՎԵՑ ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

*Կատալոնիայի խորհրդարանը, որն արձակվել է Իսպանիայի կառավարության կողմից, ընդունել է այդ որոշումը եւ դադարեցրել աշխատանքը մինչեւ վաղաժամկետ ընտրությունների անցկացումը:*

*Խորհրդարանի նախագահության՝ հոկտեմբերի 31-ին նշանակված նիստը չեղարկվել է: Մադրիդում հույս են հայտնել, որ վաղաժամկետ ընտրությունները թույլ կտան «վերականգնել իրավական պետությունը»:*

*Նշենք, որ վաղաժամկետ ընտրությունները նշանակված են դեկտեմբերի 21-ին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԷՍՏՈՆԻԱ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խավորած պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Անցկացված հանդիպումներում առանձնակի ուշադրություն հատկացվեց երկկողմ հարաբերության ընդլայնման ու խորացման հարցերին, կանխատեսվեցին առաջնահերթային ոլորտներում համագործակցության կոնկրետ միջոցառումներ: Էստոնիայի ղեկավարությունը հերթական անգամ իր աջակցությունը հայտնեց Վրաստանի տարածքային ամբողջականության, Վրաստանի եվրոպական եւ եվրանտլանտյան ինտեգրման քաղաքականության աջակցության հարցում:

Նոյեմբերի 1-ին Թբիլիսիում անցկացվեց վրաց-էստոնական գործարար համաժողով, որի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Էստոնիայի նախագահ Քերստի Կալյուլայդը, պաշտոնական այլ անձինք:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԹԲԻԼԻՍԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅՈՒՄ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿՈՒՆԵՆԱ 40 ՄԱՆԴԱՏ




***Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց հոկտեմբերի 21-ին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում մայրաքաղաքի քաղաքապետի եւ սակրեբուլոյի ընտրության արդյունքները:***

Ըստ ներկայացված հաշվետվության, քաղաքապետի ընտրություններում «Վրացական երազանքի» ներկայացուցիչ Կախիա Կալաձեն ստացել է ընտրողների ձայների 51,09 տոկոսը: Հաջորդ տեղերը բաշխվել են հետեւյալ կերպ՝ անկախ թեկնածու Ալեկո Էլիսաշվիլի՝ 17,48 տոկոս, «Ազգային շարժման» թեկնածու Զաալ Ուդումաշվիլի՝ 16,59 տոկոս, «Եվրոպական Վրաստանի» ներկայացուցիչ Էլենե Խոշտարիա՝ 7,11 տոկոս, «Հայրենասերների ալյանսի» թեկնածու Իրմա Ինաշվիլի՝ 3,02 տոկոս, Գիորգի Վաշաձե՝ 1,92 տոկոս, Կախա Կուկավա՝ 1,25 տոկոս: Քաղաքապետի մյուս թեկնածուները հավաքվել են մեկ տոկոսից քիչ ձայներ:

Ինչ վերաբերում է Թբիլիսիի սակրեբուլոյի ընտրությանը, ապա համամասնական ընտրակարգով «Վրացական երազանքը» կունենա 15, «Ազգային շարժումը»՝ 5, «Եվրոպական Վրաստանը»՝ 3 եւ «Հայրենասերների ալյանսը»՝ 2 մանդատ:

Մեծամասնական համակարգով Թբիլիսիի բոլոր 25 ընտրատարածքներում հաղթել են «Վրացական երազանքի» թեկնածուները:

Այդպիսով, Թբիլիսիի սակրեբուլոյում կառավարող կուսակցությունը կունենա 40 մանդատ, իսկ բոլոր ընդդիմադիր կուսակցությունները միասին վերցրած՝ 10 մանդատ:

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ԻՆ

***Քութայիսիի քաղաքապետի եւ Վրաստանի եւս հինգ մունիցիպալիտետների ընտրությունները կանցկացվեն նոյեմբերի 12-ին:***

Այդ մասին հայտարարեց ԿԸՀ նախագահ Թամար Ժվանիան: Նրա խոսքով, Վրաստանի խորհրդարանական մայրաքաղաքի՝ Քութայիսիի, ինչպես նաեւ Մարտվելիի, Բորժոմիի, Օզուրգեթիի, Խաշուրիի եւ Ղազբեգիի մունիցիպալիտետներում ընտրությունները կանցկացվեն նոյեմբերի 12-ին:

Նշենք, որ վերոնշյալ քաղաքում եւ մունիցիպալիտետներում ընտրությունների երկրորդ փուլը նշանակվել է այն կապակցությամբ, որ հոկտեմբերի 21-ին թեկնածուներից եւ ոչ մեկին չհաջողվեց ստանալ ձայների 50 տոկոսից ավելին:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲՅՈՒՐՈՅԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րի կապակցությամբ Սահմանադրական դատարանի լիազորությունների մասին հոդվածներում:

Խորհրդարանի աշխատակարգի համաձայն, ընթացակարգային հարցերով կոմիտեին հանձնարարվել է մեկ շաբաթվա ընթացքում ստուգել պատգամավորների ստորագրության ստույգությունը: Երբ ստորագրությունների ստույգությունը հաստատվի, կձեւակերպվի սահմանադրական փոփոխությունների համաժողովրդական քննարկման հանձնաժողով, որը կգործի մեկ ամիս:

Խորհրդարանական մեծամասնությունը ծրագրում է սահմանադրական փոփոխությունները, երկու ընթերցմամբ, ընդունել մինչեւ դեկտեմբերի 15-ը: Ինչ վերաբերում է երրորդ ընթերցմանը, ապա այն կանցկացվի հաջորդ տարվա գարնանային նստաշրջանում:



Մեկնաբանելով ներկայացված սահմանադրական փոփոխությունները՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ սահմանադրական փոփոխությունների ընդունման հարցում ժողովրդի հետ իրենք հասել են փոխհամաձայնության:

- Մինչեւ ընտրությունները մենք համարձակորեն հայտարարեցինք, որ տեղական ընտրությունները կունենան սահմանադրական հանրաքվեի նշանակություն: Ընտրությունների արդյունքներն ու դրանցում «Վրացական երազանքի» համոզիչ հաղթանակը ցույց տվեցին, որ բնակչության մեծ մասը պաշտպանում է սահմանադրական փոփոխությունները:



## ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Նոյեմբերի 23-ին մեկօրյա այցով Թբիլիսի ժամանեց Ռուսական Ուղղափառ եկեղեցու արտաքին գործերի բաժնի ղեկավար, միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը:*

*Ինչպես տեղեկացրել է Վրաց Պատրիարքությունը, միտրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը վրացական կողմին փոխանցեց Ռուսաստանի պատրիարքի տիտղոսի վերականգնման 100-ամյակին նվիրված միջոցառումներին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի եւ Վրաց Ուղղափառ եկեղեցու պատվիրակության մասնակցության հրավերը:*

*Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը հյուրին շնորհակալություն հայտնեց այցի եւ հրավերի համար:*

## 90-ՕՐՅԱ ԺԱՄԿԵՏԸ ԽԱԽՏԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ 9 875 ՔԱՂԱՔԱՑԻ

*Եվրամիության Շենգենյան գոտու երկրների հետ ձեւակերպված անայցեգրային պայմանակարգի հաստատումից հետո, ընթացիկ տարվա մարտի 20-ից մինչեւ հոկտեմբերի 20-ը ներառյալ, անայցեգրային պայմանակարգից օգտվել է Վրաստանի 161 885 քաղաքացի, որից պայմանագրով սահմանված 90-օրյա ժամկետը խախտել է 9 875 քաղաքացի:*

*Ինչպես տեղեկացնում է Վրաստանի եվրոպական եւ եվրանտլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով պետնախարարությունը, ժամկետը խախտողների թիվը կազմել է պայմանակարգից օգտվողների ընդհանուր թվի 6,1 տոկոսը:*

*Ինչպես նշված է հաղորդագրությունում, Վրաստանի պաշտոնական գերատեսչություններին հայտնի չէ, թե վերոնշյալ 9 875 քաղաքացիներից քանիսն է մնացել Շենգենյան գոտում, եւ քանիսն է անցել երրորդ երկիր՝ պահպանելով անայցեգրային պայմանակարգը:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ
(3 նոյեմբերի)

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.595 | 2.660 |
| ԵՎՐՈ | 3.001 | 3.127 |
| ՌՈՒԲԼԻ | 0.042 | 0.049 |
| ԴՐԱՄ | 0.0041 | 0.0059 |

*Հոկտեմբերի 27-ի համեմատ, դոլարի կուրսը ավելացել է 0,065 լարիով:*

შემოსავლების სამსახური

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

## ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

***Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 2-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետի տեղակալ Վախթանգ Լաշքարաձեի գլխավորած պատվիրակությունը Տոկիոյում մասնակցում է Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից կազմակերպված տեխնոլոգիաների ու նորամուծությունների հերթական 6-րդ գագաթաժողովին:***

Գագաթաժողովի աշխատանքի շրջանակներում, եկամուտների ծառայության պատվիրակությանը ընձեռնվել է արդի տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների մասին խոսելու, ինչպես նաեւ գագաթաժողովի մասնակիցների հետ սահմանների կառավարման ու մաքսային կատարողական միջոցառումների բարելավման գործընթացի, արդի տեխնոլոգիաների դերի ու հնարավորությունների քննարկման հնարավորություն:

Գագաթաժողովի շրջանակներում, առաջին անգամ տեղի ունեցավ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության եւ Ճապոնիայի ֆինանսների նախարարության մաքսային վարչակազմի միջեւ երկկողմ հանդիպումը: Վախթանգ Լաշքարաձեն հանդիպում ունեցավ Ճապոնիայի մաքսային վարչակազմի ղեկավար Ացուշի Յիզուկայի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին համագործակցության առաջնահերթությունները եւ խոսեցին երկու երկրների միջեւ փոխգործակցության նշանակության մասին: Կողմերը հաստատեցին մաքսային ոլորտում վարչական փոխգործունեության մասին պայմանագրի ձեւակերպման նպատակով բանակցություններ սկսելու պատրաստակամությունը: Զրուցեցին նաեւ Համաշխարհային մաքսային կազմակերպության եւ միջազգային մաքսային համագործակության տարածքում ընդհանուր, արդյունավետ ու գործուն լծակների աջակցության ու



մատչելիության անհրաժեշտության մասին:

*ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱ. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# ՎԱՐՈՐԴՆԵՐԸ՝ ՆՈՐ «ԽԵԼԱՑԻ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐԻ» ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

### ԿԻՐԱՌԿՎԵԾ ՏԵՍԱՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՆՈՐ ԿԱՐԳ

Նոյեմբերի 1-ից ուժի մեջ մտավ Վարչական իրավախախտումների օրենսգրքի տեսատուգանքների նոր կարգ:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, քաղաքացիներին առավելագույն տեղեկատվություն տալու նպատակով, մշակվել են, այսպես կոչված, «խելացի տեսախցիկների» կիրարկմամբ տեսատուգանքների սահմանման նոր կարգի ու տեխնիկական նորամուծությունների վերաբերյալ բուկլետներ:

Հաղորդագրության մեջ նշված է, որ «խելացի տեսախցիկների» օգտագործմամբ, տեսավերլուծական ծրագրերի միջոցով, ավտոմատ կերպով կվավերացվեն վարչական տարբեր խախտումներ: Տեխնոլոգիական բարեփոխման շրջանակներում, մինչեւ 2017 թվականի վերջը Վրաստանի ողջ մասշտաբով կտեղակայվի շուրջ 3000 «խելացի տեսախցիկ»:

Ինչպես նշեց ՆԳ նախարարության համատեղ գործողությունների կենտրոնի տնօրեն Գիորգի Արսոշվիլին, 2017 թվականի նոյեմբերի 1-ից ուժի մեջ են մտել նոր կարգավորումներ, որոնք նորովի են կարգավորում տուգանքների սահմանման կարգը: Տուգանման դեպքում, վարորդը sms հաղորդագրություն է ստանում վարչական կոնկրետ իրավախախտման մասին: Այդ առումով նշանակալից է, որ յուրաքանչյուր վարորդ ՆԳՆ սպասարկման գործակալությունում պարտադիր կարգով վավերացնի իր բջջային գործող հեռախոսահամարը:

- Յուրաքանչյուր վարորդ կարող է ստուգել ստացած հաղորդագրությունը եւ, եթե դրանում չլինի կոնտակտային հեռախոսահամար, ապա պետք է դիմի սպասարկման գործակալությանը: Եթե վարորդը sms հաղորդագրության ստացումից 10 օրվա ընթացքում վճարի տուգանքը, ապա կառնչվի այսպես կոչված բոնուսների համակարգի հետ եւ կկարողանա վճարել 20 տոկոսով նվազեցված գումար: Եթե վարորդը այդ 10 օրվա ընթացքում չի վճարում տուգանքը, ապա գործում է հստակեցված կարգ, ըստ որի, փոստի միջոցով նրան առաքվում է տեղեկատվություն տուգանքի մասին: Ցավոք եղել են դեպքեր, երբ կոնկրետ տուգանքը չեն վճարել, եւ փոստային ծանուցում էլ չի եղել: Նման դեպքերում, ուժի մեջ է մտնում տուգանքի վճարման երկփուլ կարգ: Փոստի միջոցով, ՆԳՆ ապահովում է տուգանքի մասին տեղեկատվության փոխանցումը եւ, եթե հանձնումը չի իրականացվում, ուժի մեջ է մտնում երրորդ փուլը, որի դեպքում ՆԳ նախարարության պաշտոնական police.ge կայք-էջում իրականացվում է տուգանքի հրապարակումը: Հրապարակումից մեկ ամսվա ժամկետում կոնկրետ տուգանքի մասին հաղորդագրությունը համարվում է վարորդին փոխանցված, եւ այն ենթակա է վճարման: Հետեւաբար, նշանակալի է, որ վարորդները պարբերաբար ծանոթանան ՆԳՆ-ի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությանը,- հայտարարեց Գիորգի Արսոշվիլին եւ հավելեց.- Օրենսդրական փոփոխություններն արդեն հնարավորություն են տալիս այն մասին, որ տեւողության ժամկետը երկարացված է. 6 ամսվա փոխարեն, հասցվել է մեկ տարվա, ինչը այն բանի երաշխիքն է, որ ժամանակին կոնկրետ տուգանքները առավելագույնս կառգրավվեն:



### ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՆՈՐ ԿԱՐԳ՝ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես արդեն նշեցինք, վարորդների համար երթեւեկության կանոնների խախտման նոր տուգանքներ են սահմանվել:

«Վարչական իրավախախտումների օրենսգրքում» ավելացվել են մի շարք նորմեր: Մասնավորապես, երեք ամսից ավելի անտերության մատնված տրանսպորտային միջոցի սեփականատերը տուգանվում է 50 լարիով:

Երթուղային տրանսպորտի միջոցի հատուկ գոտում (BUS LANE) երթեւեկության համար, երթեւեկությունը, կանգառումը կամ կանգնեցումը հանգեցնում է 100 լարիի տուգանքի:

Բացի այդ, 50 լարի տուգանքի է հանգեցնում հեծանվային հարթակում կամ հեծանվային գոտում տրանսպորտային այլ միջոցների երթեւեկությունը, կանգառումը կամ կանգնեցումը:

Նախնական տեղեկատվությամբ, ճանապարհին տրանսպորտային միջոցի կանգնեցումը կամ կանգառումը առանց գրանցման համարի, ներքին տարանցիկության համարի կամ «TEST» համարի, հանգեցնում է 100 լարիի տուգանքի:

Նշենք, որ խորհրդարանին ներկայացված փոփոխություններով, այն դեպքում, երբ պարզվում է, որ տրանսպորտային միջոցի գրանցման համարի, ներքին տարանցիկության համարի կամ «TEST» համարի անհամապատասխանությունը պայմանավորված է դրա գողությամբ, ապա սեփականատերն ազատվում է տուգանքից նաեւ տրանսպորտային միջոցի փոխադրման եւ կանգառման վարձի վճարումից:

### ՏԵՍԱՏՈՒԳԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Վրաստանի ՆԳ նախարարությունը, նոյեմբերի 1-ից «խելացի տեսախցիկների» կիրարկման եւ վարչական իրավախախտումների ավտոմատ կարգով վավերացման արդյունքում տուգանքների սահմանման կապակցությամբ, հրապարակել է տեղեկատվություն տեսատուգանման ենթակա խախտումների վերաբերյալ:

Տեսատուգանման ենթակա են՝

* անցում՝ լուսանշանի կարմիր լույսի տակով,
* երկակի հոծ գծի խախտում,
* արագության գերազանցում,
* շարժում՝ երթեւեկության հակառակ ուղղությամբ,
* երթեւեկում՝ մունիցիպալային տրանսպորտի գոտիով:

Նոր կարգավորումների համաձայն, իրավախախտը, տուգանքի սահմանումից անմիջապես հետո, խախտման վերաբերյալ տեղեկացվում է հակիրճ տեքստային հաղորդակցությամբ կամ ապլիկացիայի միջոցով:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ



# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ

***Հոկտեմբերի 31-ին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Նինո Ջավախաձեն, ֆինանսների փոխնախարար Նիկոլոզ Գագուան եւ Վրաստանի Ազգային բանկի փոխնախագահ Արչիլ Մեստվիրիշվիլին լրագրողների համար անցկացրին «Կուտակային կենսաթոշակի մասին» Վրաստանի օրինանախագծի շնորհանդեսը:***

Նշվեց, որ կենսաթոշակային բարեփոխումը տարածվում է Վրաստանի քաղաքացիների կամ Վրաստանում մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացիների, կամ քաղաքացիություն չունեցող անձանց վրա, ովքեր աշխատում կամ զբաղվում են ինքնագործունեությամբ եւ այդ գործունեությունից եկամուտ ստանում: Կենսաթոշակային բարեփոխումը միաժամանակ կսկսվի ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հանրային հատվածում:

Նինո Ջավախաձեն իր խոսքում ներկայացրեց բարեփոխման նշանակալի կետերը: «Կուտակային կենսաթոշակի մասին» օրինանախագիծը նախատեսում է սահմանված ներդրումներով կենսաթոշակային սխեմա, մասնավորապես, յուրաքանչյուր աշխատող, գործատու եւ պետություն օրենքով սխեմայի մասնակցի անհատական կենսաթոշակային համարի հաշվով իրականացնում է ներդրում՝ յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի չհարկադրված գումարի 2 տոկոսի չափով: Ինչ վերաբերում է ինքնագործունեությամբ զբաղվող անձանց, ապա նրանք ներդրում են կատարում իրենց եկամտի ընդհանուր գումարի 4 տոկոսի չափով: Պետությունը, ինչպես աշխատողների, այնպես էլ ինքնագործունեությամբ զբաղվող անձանց օգտին լրացուցիչ փոխանցում է չհարկադրված եկամտի գումարի 2 տոկոսը:

Էկոնոմիկայի փոխնախարարի խոսքով, նշանակալի է, որ բարեփոխումը միաժամանակ սկսվում է ինչպես հանրային, այնպես էլ՝ մասնավոր հատվածներում, որն իրենից ներկայացնում է միանշանակ սոցիալական պատասխանատվությամբ բաշխում մասնավոր հատվածի եւ պետության միջեւ:

- Ցանկանում եմ նշել, որ պետության մասնակցությունն այդ գործընթացում նշանակալի է, բացի 2 տոկոս ներդրումից, որը պետությունն իրականացնում է հօգուտ սխեմայի մասնակցի, անմիջականորեն ներդրումը, դրանով հաշվարկված օգուտն ու կենսաթոշակի ստացումը ազատվում են եկամտահարկից: Դա մեծ արտոնություն է, ինչը ուղղված է մարդկանց այդ սխեմայում ներգրավելու խրախուսմանը: Ստացվում է, որ պետության մասնակցությունը երկակի է՝ անմիջականորեն ներդրվող 2 տոկոսը եւ մասնակիցներին առաջարկվող սահմանված արտոնությունները,- հայտարարեց Նինո Ջավախաձեն եւ հավելեց, որ միաժամանակ տեղի կունենա կուտակված գումարի հաշվին ներդրումը, որի արդյունքում, դրան կավելանա նաեւ ներդրումային եկամուտը: Հետեւաբար, համակարգում ներգրավված քաղաքացին կենսաթոշակային տարիքում արդեն կունենա որոշակի խնայողություն, ինչը, պետական կենսաթոշակի հետ միասին, կդյուրացնի նրա սոցիալական ապահովությունը կենսաթոշակային տարիքում:

Նինո Ջավախաձեի խոսքով, կուտակային կենսաթոշակային սխեմայում ներգրավված անձի մինչեւ կենսաթոշակային տարիքը կամ կենսաթոշակի ստացման ընթացքում վախճանի դեպքում, նրա հաշվի վրա կուտակված գումարը փոխանցվում է նրա օրինական ժառանգներին, ովքեր վերոնշյալ գումարը կարող են ստանալ լրիվությամբ կամ մաս-մաս:

Ինչ վերաբերում է կենսաթոշակային համակարգում ներգրավված քաղաքացիների տարիքին, ապա, ինչպես նշվեց շնորհանդեսին, դրանում ներգրավումը պարտադիր է մինչեւ 40 տարեկան աշխատող մարդկանց համար, եւ կամավոր կլինի նրանց համար, ովքեր օրենքը ուժի մեջ մտնելու պահին արդեն 40 եւ ավելի տարիքի են: Ինչ վերաբերում է ինքնագործունեությամբ զբաղվող անձանց, ապա նրանց ներգրավումը համակարգում, անկախ տարիքից, կլինի կամավոր:

Շնորհանդեսին նշվեց նաեւ, որ կենսաթոշակային ակտիվների ներդրումը կիրականացվի միջազգայնորեն ճանաչված չափորոշիչների պահպանմամբ, բարձրորակ ու փորձառու անդամներով համալրված ներդրումային խորհրդի կողմից մշակված ներդրումային քաղաքականության համապատասխան:

Նշենք, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրինանախագիծը չի նախատեսում գործող բազային կենսաթոշակի չեղարկումը:

Ավելացնենք, որ կենսաթոշակային բարեփոխումը, ինչը նախատեսում է կուտակային կենսաթոշակային համակարգի հիմնում, մշակվել է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության, ֆինանսների նախարարության եւ Ազգային բանկի համատեղ ջանքերով: Օրինանախագծի մշակումը իրականացվեց դոնորների (Համաշխարհային բանկի, Ասիայի զարգացման բանկի, USAID G4G-ի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Ֆրանսիայի զարգացման գործակալության (AFD) ակտիվ մասնակցությամբ:

Օրինանախագիծը Վրաստանի խորհրդարանի հաստատմանը կներկայացվի մինչեւ 2017 թվականի վերջը: Կուտակային կենսաթոշակային սխեմայի կիրարկումն ու ներդրումների փոխանցումը ծրագրված է 2018 թվականի երրորդ եռամսյակից:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*